չէ որ ցանկացած և օրինաւոր կերպով գործադրված բէֆորմները չիրագործվեն այդ երկրորդ Բալկարիայի մէջ։

Մենք երբէք չենք զրկել հայերին թիւրքաց կառավարութեան դէմ, ասում է «Ժուրնալ դ'Օրիան», բայց միշտ խորհուրդ ենք տուել նրանց համբերութիւն և միևնոյն ժամանակ օրինական միջոցների գործ դնելը, իրանց գոյութեան համար իրաւունքը սառնալու նպատակով։ Մենք հասկանում ենք որ այդ տեսակ լեզու վախեցնում է հին թիւրքերին, որովհետև մենք հայոց դասը պաշպանում ենք և գոհունակներով զինված, առանց յափշտակութեան և կրքի, բայց և առանց թուլութեան և կոմպրոմիսների։

Վիեննայի թերթը աւելացնում է։ Ամբողջ Եւրոպայից մենք ստանում ենք համակրական ցոյցեր մեր յանձն առած առաքելութեան համար։ Բայց մահմեդական թերթը թող մեզ ների վերաբերել իրան այն խօսքը, որ ասել է նրա նման արարածների մասին մի մեծ մինիստր. այդ տեսակներին չեն գրչում ձեռնոցով ծածկած ձեռքերով, բայց նրանց պէտքերի երեսին թքում են արհամարհանքով։ Ինչ և իցէ «Զէրիդէի Հավաքիս» լրագրի մատնութիւնը մի մեծ պատիւ է բերում «Ժուրնալ դ'Օրիան» լրագրին, որովհետև ապացուցանում է մեզ թէ բէֆորմների թշնամիները թիւրքիայում վերջին ծայր յուսահատութեան են հասել և թէ լուսաւորված Եւրոպան արձագանք է տալիս մեր ձայնին։ Ի վերջոյ մենք չենք հաւատում արգելմանը, բայց մենք պարտաւորութիւն համարեցինք մերկացնել քիւրդերի և նրանց ագենտների մատնութիւնները։

ԳԵՐՄԱՆԻԱ

Իշխան Բիսմարկի պաշտօնական լրագիրը յայտնում է, որ Նրան յայտնի էր, թէ կայսրների տեսութիւնը պէտք է Դանցիգի մէջ կատարվէր, բայց նա տեղի ունէր մինչև վերջին րոպէն սպնդելու, որ տեսութիւնը կը կայանայ Շեռատենի կամ Կէօնիգսբերգի մէջ։ Դանցիգի մէջ հրատարակվող լրագրների լուրը կայսրների տեսութեան մասին առանց հերքման թողնելը կը նշանակէր Դանցիգը եւրոպական դաւադիրների և մարդասպանների կենտրոնատեղի դարձնել։ Այդպիսի պատասխանատուութիւնը ոչ ոք չէ կարող իր վրա առնել։ Այդ բանը դժուար էր հասկանալ Նորերումն կատարված վրէժխնդրի անցքերից յետոյ։

Վերջին տեղեկութիւնների համեմատ գերմանական կառավարութեան յարաբերութիւնները կաթոլիկ եկեղեցու հետ լաւանում են։ Գերմանական դեսպանը Վատիկանի մէջ, նշեցեր, որին յանձնված են բանակցութիւնները գերմանական և պապական կառավարութիւնների մէջ, արդէն տեսնվել է մի անգամ պապի հետ և երեք անգամ կարդինալ Եակոբինիի հետ։ Բացի դրանից ուրիշ ոչոք չէ մասնակցում այդ բանակցութիւններին։ Բերլինից հաղորդում են, թէ այնտեղ պաշտօնապէս հերքվում է այն լուրը, երբ թէ իշխան Բիսմարկ բարեխօսել է իտալիան կառավարութեան առաջ յօգուտ պապի։ Այդ հաղորդութեան մէջ աւելացրած է, որ իտալիան կառավարութեան բռնած ընթացքը վերջին ժամանակներում կատարելապէս ինքնուրոյն բնաւորութիւն ունի և որ նրան արտաքուստ ոչինչ չէ ներշնչված։

Գերմանական բայխստագի անդամ Բիւլեր, որ շատ անգամ առաջարկել է ընդհանուր զինաթափութիւն, Նորերումն բրոշիւրի ձևով մի բաց նամակ գրեց Գամբետտային «Պատերազմ թէ խաղաղութիւն» վերնագրով։ Բրոշիւրի հեղինակը չէ հաւատում, որ յաւիտենական խաղաղութիւնը շուտով իրագործվի։ „Այնու ամենայնիւ, նրա կատում է Բիւլեր, Եւրոպայի մէջ տարածված պետական փառասէր ձգտումների հիւանդութիւնը, անընդհատ զինաւորութիւնը և պատերազմական սպառնալիքները արագ և վճռողական բժշկութեան կարօտ են։ Բժշկվելու համար ամենալաւ միջոցը զինաթափութիւն է։ Դրա համար բաւական է մի քայլ անել. բաւական է, որ Եւրոպան պետութիւնները մի համաձայնութիւն կայացնեն յօգուտ խաղաղութեան“։ Բրոշիւրի հեղինակը Գամբետտային արած իր առաջարկութիւնները ձեռակերպում է հետևեալ կերպով. „պէտք է մերժել ազգերնական իդեալը աշխարհը վերանորոգելու մասին և միակողմանի զինաթափութիւնը կամ պաշտպանողական զէնքերի թուլացնելը և ձգտել պետութիւնների փոխադարձ ազատ համաձայնութեանը զօրքերի թիւ միաժամանակ և միակերպ քչացնելու վերաբերութեամբ մի որոշ ժամանակամիջոցի ընթացքում, օրինակ 10—15 տարի, և միջնորդ դատարան հիմնելու մասին, որ վճռէր այդ ժամանակամիջոցի ընթացքում բարձրացած միջազգային վէճերը։ Վերջը բրոշիւրի հեղինակը ջերմ հրաւէր է կարդում Գամբետտային և ֆրանսիացիներին ընդունել այդ խաղաղասիրական առաջարկութիւնը, որ մի ժողովուրդ միւսին է անում։ Բացի այդ նա համոզում է ֆրանսիացիներին չը հաւատալ այն կարծիքին, երբ թէ ներքին անհամաձայնութիւնները վնասում են Գերմանիայի ոյժին և միութեանը և երբ թէ զօրքերի համար առած ծախսերը նրան նրբեթակապէս մանկացնում են։ „Արտաքին թշնամին, աւելացնում է Բիւլեր, գերմանացիներին միշտ միացած կը գտնի, իսկ նրբեթակները միշտ առաջ կը լինի գերմանացիների հայրենասիրութեան և անձնազոհութեան շնորհիւ։“

ԱՄԵՐԻԿԱ

Վաշինգտոնի մէջ ստացված լուրը նախագահ Գարֆիլդի վատ և անյուսալի դրութեան մասին մեծ վրդովմունք և ընդհանուր տխրութիւն պատճառեց։ Ամբողջ գիշերը ժողովուրդը չէր հեռանում փողոցներից։ Ամենքը պտարակում էին բժիշկներին։ Հասարակութիւնը ցուցադրութիւն էր յայտնում, որ նախագահի մոտ չը հրաւիրվեցան Միացեալ Նահանգների բոլոր երևելի բժիշկները։ Բոլոր լրագրները պնդում էին, որ ամենալաւ բժիշկները հեռացրած էին նախագահից բժիշկ Բլիսսի փառասիրութեան պատճառով, որ կարողացաւ մինչև անգամ նախագահի տնային բժիշկին հեռացնել։ Բլիս այնքան վատ էր վարվում հրաւիրված բժիշկների հետ, որ նրանք հեռանում էին և չէին մասնակցում նախագահի բժշկութեանը։ Գարֆիլդին դեղ տալող բժիշկներից երեքը ոչ մի վերք չէին տեսած 1864 թուականի պատերազմից յետոյ, և Անիլ և Համիլտոն բժիշկները հրավիրվեցան Գարֆիլդի մոտ վերք ստանալուց մի տարի յետոյ, երբ արդէն ուշ էր և սխալը անկարելի էր ուղղել։ Բժիշկներից մի քանիսը հաւատացնում էին, որ պէտք էր հանել գնաղը, որպէս զի նախագահի տարրերը չը վարակվէր։ Այդ բանն էլ Բլիս թոյլ չը տուաց։ Նախագահի հիւանդութեան բոլոր ժամանակ տիկին Գարֆիլդ իր հաստատամտութեամբ և սիրով դէպի իր ամուսինը արժանացաւ ամենքի յարգանքին։ Նա գիշեր ցերեկ իր ամուսնի անկողնի մոտ էր գտնվում և արտաքուստ հանգիստ էր ձևանում, որ չափազանց հանգստացնող ազդեցութիւն էր գործում հիւանդի վրա։ Սպիտակ տան մէջ մի առանձին վառարան էր կազմված, որի մէջ նա անձամբ պատրաստում էր հիւանդի համար կերակուր։

Սեպտեմբերի 6-ից արդէն նկատվում էր, որ Գարֆիլդի դրութիւնը վատանում է։ կամաքին նմանող հիւանդը չէր կարողանում ընդդիմանալ հիւանդութեան ազդեցութեանը և կորցնում էր ուշը։ Բժիշկները դեռ ևս յոյս էին տալիս տիկին Գարֆիլդին, չը նայելով, որ հիւանդի արիւնը վարակված էր։ Գարֆիլդի մտաւոր ընդունակութիւնները բնական էին, երբ նա առաջ ուշաթափվեցաւ և յետոյ քնեց։ Գարֆիլդ վախճանվեցաւ հինգ այն րոպէին, երբ բժիշկները կարծում էին, թէ նա լաւանում է։ Նախագահի դիակը կատարեալ կմախք է։

ԻՏԱԼԻԱ

Մենոսի Գարիբալդի մինիստրութեան մի պաշտօնական խնդիրք ներկայացրեց կամաւոր զօրքերի մի բաժին հիմնելու համար, որ „Բեդուէի“ ընկերութիւնը կամենում է կազմակերպել։ Մինիստրութիւնը պատասխանեց, թէ նա հաւանում է այդ ընկերութեան ազգասիրական նպատակները, բայց խնդրված թոյլատրութիւնը չէ կարող տալ, որովհետև մի կողմից օրէնքը թոյլ չէ տալիս կառավարութենից անկախ զօրաբաժինների զոյութիւնը, միւս կողմից պատերազմական կրթութիւնը ցանկացողներին ընդարձակորէն ասպարէզ է տրվում։

Սուրբ Պետրոսի մայր եկեղեցու պաշտօնեայ Հոգևորական կոմս Կամպելօ մի նամակ գրեց կարդինալ Բարրովէօին, որով յայտնում է, թէ նա, նկատելով, որ այժմեան պապը իր նախորդի նման ոչինչ միջոց չէ գործ դնում Իտալիայի հետ հաշտվելու համար, հարկաւոր է համարում ընդդատանութիւն ընդունել։ Այդ անցքը հոսմի մէջ մեծ տպաւորութիւն գործեց։

Վենետիկում ժողովված աշխարհագրական կոնգրեսի երկրորդ նիստի ժամանակ Լեսսեպս հաղորդեց, որ իտալական հումբերտ թագաւորը նրան յայտնել է, թէ Ֆրանսիայի և Իտալիայի մէջ առևտրական մի նոր դաշնագրութիւն է կապված։ Լեսսեպս պատմեց Պանամի ջրանցքը անցկացնելու մանրամասնները։

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Բերլին, 24 սեպտ.

Այստեղ ընտրողական շարժումը ճշմարիտ այնքան սաստկանում է, որ անկարելի է նրան մտես առնել։ Կառավարութիւնը, ի հարկէ, իր կողմ ձգելու համար ընտրողներին, վճռեց հարկեր չը վերցնել վերջին ատիճանների հարկատուներից ներկայ եռամսեակի համար և այս արտօնութիւնը վայելողների թիւում գտնվեցան անպատեալի կերպով Staats-Einkommen-Steuer (եկամտի պետական հարկ) վճարողներն էլ։ Այսպիսով կառավարութիւնը կարծում էր իր կողմը ձգել բոլոր պաշտօնեաներին և ստանալ եկող Բայխստագի մէջ մի մեծամասնութիւն Բիսմարկի քաղաքականութեան համար։ Բայց այժմ արդէն շատերը կասկածում են, որ այդ միջոցները, ինչպես աղքատների ապահովութիւնը և հիւանդների ու աշխատանքին անկարողներին հոգատարութիւը կառավարութեան կողմից, կարող կը լինեն յաջողվել։ Բազմութիւնը, որ Բիսմարկ կարողացել է հաւաքել իր համար, այնքան բազմատեսակ է, որ հապիւ թէ ամեն բանում նրա հետ միասին կընթանայ։ Ինչպես կարելի է երևակայել, որ կղերականները, որոնց այնքան զիջումներ արեցին, այժմ պաշտպանողականների, հակասիմաների և աշխատաւորների հետ միասին երթան։ Իսկ այս դաշինքը յետադէմ կուսակցութիւնների կողմից սոփպեց և ազատականներին միանալ և մի երեսոյթ, որ երբէք այնքան պարզ նկատված չէր. այժմ կատարվումէ։ Նացիոնալ-լիբերալները և նրանցից անջատված աւելի առաջադէմ մասը, որ իրան «ազատամիտ կուսակցութիւն» է անուանում, իսկ սովորաբար «սեցէսսիօնիստ» անուն է կրում, Բերլինի գրեթէ ամեն ընտրողական բաժիններում (Wahlkreis) որոշեց իր սեփական կանդիդատ չառաջարկել, այլ իր ձայները տալ առաջադէմ «Fortschritt» կուսակցութեան կանդիդատին։ Որ Բերլին նոյնպես առաջադիմական կը մնայ, ինչպես և մինչև այժմ էր, հաղիւ թէ կարելի է կասկածել և երևի Շտէցկկէլները, Հէնրիցիները և tutti quanti, ձայների ահագին բազմութեամբ կը գլորվեն, փոխանակ ընտրված լինելու, ինչպես նրանք, ի հարկէ, հաւատացնում են։

Կառավարութիւնը այնպիսի ընթացք է բռնել, որ այնպիսի կողմերից ընդդիմադրութիւն կը ստանայ, որտեղից երբէք չէր սպասում։ և կղերականները, հէնց որ նոր այժ կառնեն, անկասկած կառավարութեան դէմ կուղղեն իրանց գործունէութիւնը և կաշխատեն վրէժ առնել առաջվայ Kulturkampf'ի համար, որ նրանց հասցրել էր արդէն գրեթէ դէպի կատարեալ անկումն։ Միւս կողմից Arbeiterpartei (բանւորների կուսակցութիւնը) անկասկած կը տեսնի, որ կառավարութեան «բարերարութիւնները» միայն արտաքուստ այսպէս էին երևում և իսկապէս ոչնչով չեն բարձրանում աշխատողների դրութիւնը, իսկ գուցէ կատարելապէս կը սրափվեն, ինչպես արդէն այժմ էլ սկսում են յայտնել ժողովներում նշանաւոր է այն երեսոյթը, որ մինչդեռ կառավարութիւնը իր կողմն է ուզում գրաւել աշխատաւոր դասը, նա, այնու ամենայնիւ նոյն սատկութեամբ հալածում է սոցիալ-դեմոկրատներին, իսկ ինքն աշխատում է ապացուցանել որ ինքն էլ ձգտում է դէպի աշխատանքի ազատութիւնը կապիտալի բռնութիւնից։ Սոցիալ-դեմոկրատները չարունակ հալածվում են, չատ քաղաքներ արդէն «փոքր պաշարման» դրութեան մէջ են գտնվում և այս կուսակցութիւնից չատերը, որոնք ամենաողորմելի և աղքատ դասակարգին են պատկանում, գաղթում են դէպի Ամերիկա, ուր անցեալ ամիս հասան Գերմանիայից մոտ 56.000 գաղթականներ,—մի չեղած թիւ, քանի որ կայ դաղթականութիւնը դէպի Ամերիկա։

Անդրէաս Աւետարան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԱՋԱԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսերը առաջին շաբաթի արժէ 96 ր. 78 կ., երկրորդ 93 ր. 87 կ., երրորդ 94 ր. 12 կ., չորրորդ 93 ր. 62 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսերը արժէ 226 ր. 25 կ., երկրորդ 220 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսերը արժէ 91 ր. 25 կ., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 25 կ., ոսկի 7 ր. 65 կ.։ Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 25,94 պենս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 221 մարկ 25 պֆ., Փարիզի վրա արժէ 274 ֆրանկ 25 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ